ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**2024-2029թթ**

# Բովանդակություն


1. Հաստատության գործունեությունը----------------------------------------3
   1.1 Դպրոցի շենքային պայմանները-------------------------------------15
   1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն----------------------------------------------------------19
   1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն---------------------------------------------------22

1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ,ծնողական համայնքի,կրթության կառավարման մարմինների ,շահառու կազմակերպությունների հետ------------------------------------------31
1.5 Ուսումնական միջավայր--------------------------------------------35
1.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը----------------------------------------------------------39
1.7 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը----------------------------------47
1.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը----------------------------------------------51
1.9 Բազմակարծիք,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն---------------------------------------------58
1.10 Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն-------------------------------62
1.11 Ֆինանսական գործունեության վերլուծություն-------------------70
2 Զարգացման ծրագրի գնահատման չափանիշները և վերահսկողությունը----------------------------------------------------------74
3 Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները-------------------------75

# 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

<<ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իր գործառույթներն իրականացնելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Պետության վերջին տարիների արմատական բարեփոխումները հանրակրթության ոլորտում բովանդակային մասով, դպրոցներին տրվեց ինքնավարություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը ընդլայնվեց, ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգը ենթարկվեց փոփոխության, ինչպես նաև կառավարման համակարգի ձևափոխություն եղավ:
Այս ամենը սահմանում է զարգացման ծրագրի բովանդակությունը:

Դպրոցը նպատակ ունի սովորողի համար դառնալու այն վայրը, որտեղ նա իրեն լավ է զգում, հարմարավետ պայմաններ կան կենսագործունեության համար, որտեղ հետաքրքիր է բոլորին: Յուրաքանչյուր աշակերտյուրաքանչյուր դասի ավարտին պետք է ձեռք բերի հմտություն կամ բարելավի այն, ինչ մինչ այդ չէր կարող անել: Հետևաբար շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրի ճիշտ, նպատակային պլանավորումը: Դպրոցը պետք է ունենա զարգացման առնվազն հինգ տարվա տեսլականը և գտնվի անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

Զագացման ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով պետության պատվերը դպրոցին՝ այն է՝կրթել այնպիսի քաղաքացի, որ ոչ միայն գտնի իր տեղը կյանքում, այլ լինի կարողունակ՝ զինված գիտելիքներով, հմտություններով, ունենա հստակ արժեքներ և դիրքորոշումներ, գիտակցի երկրի շահերի առաջնահերթությունը, ազգային ինքնության, մշակույթի պահպանման և զարգացման խնդիրները:

Շատ կարևոր է հասնել այն արդյունքին, որ աշակերտների սպառողական մտածելակերպը փոխարինվի արտադրողականով, որը կնպաստի նաև երկրի կայուն զարգացմանը: Զարգացման ծրագիրը կազմելիս օգտագործվել են ոլորտը կարգավորող տարբեր նորմատիվ իրավական փաստաթղթեր.

« ՀՀ Սահմանադրություն», «Կրթության մասին ՀՀ օրենք», «Հանրակրթության մասին ՀՀ օրենք», «ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք», «ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն«Երեխայի իրավունքի մասին» ՀՀ օրենք,

«ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի «Պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունվարի 15-Ի № 16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» №35 հրաման», «Հանրակրթության պետական չափորոշիչ», «ՀՀ Կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ» օրենքը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 05 օգոստոսի 2022թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» № 30-ՆհրամանըԿրթության ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր, ինչպես նաև

դպրոցի նախորդ հինգ ուսումնական տարիների դպրոցի ներքին գնահատման հաշվետվություններում ամրագրված վերլուծական տվյալների բազան, տնօրենի տարեկան հաշվետվությունները և այլ փաստաթղթեր:

Դպրոցի գործունեությունը ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

- ✧ **Կառավարում.** ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը,դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը,
- ✧ **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.** համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են մանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ,
- ✧ **Վարչատնտեսական գործունեություն.** ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա:

## Ծրագրի նպատակը

Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության զարգացման միտումներին, կրթական գործընթացի մասնակիցների հնարավորություններին ու կարիքներին, հանրակրթության պետական չափորոշչով սահմանված և առարկայական նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան յուրաքանչյուր սովորողի համար որակյալ և մրցունակ կրթություն ստանալու պայմանների ապահովումն է:

## Ծրագրի խնդիրները

Կրթական գործընթացի արդյունավետության բարձրացում, որը կնպաստի սովորողների հոգևոր ու բարոյական դաստիարակության,շնորհալի երեխաների զարգացմանը:Հաստատության ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարելավում, որը կապահովի հասանելի որակյալ կրթություն բոլոր սովորողների համար:

Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողունակությունների զարգացում, որը կնպաստի նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների ու մոտեցումների, առարկայական նոր չափորոշիչների ներդրմանը, մասնագիտական բարձր որակներով մանկավարժական համակազմի ձևավորմանը:

Վերապատրաստող ուսուցիչների հմտությունների զարգացման, ստեղծագործական և արդի դասավանդման մոտեցումներ կիրառելու մոտիվացիայի բարձրացում

1. Դասապրոցեսը ավելի արդյունավետ դարձնելու սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով դասավանդման ընթացքում էլեկտրոնային և այլ ռեսուրսների օգտագործում

2. Սովորողների՝ ըստ հետաքրքրությունների ակումբների գործունեության բարելավում
3. «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի պայմանների ընդլայնում
4. Կրթության առանձնահատուկ պայմանների ապահովում բոլոր, այդ թվում՝ բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների համար
5. Ստեղծագործող ուսուցիչների և սովորողների ինքնազարգացման համապատասխան հարթակների ապահովում
6. Ուսումնամեթոդական և դիդակտիկ նյութերով կրթական գործընթացի շարունակական ապահովում
7. Արդիականացված նյութատեխնիկական բազայի առկայություն
8. Փոխվստահության և համագործակցության միջավայրի առկայություն և այլն:

## Ակնկալվող արդյունքները

Մինչև 2030թ. հանրակրթության զարգացման պետական ծրագրի պահանջներին համապատասխան ուսուցման և ուսումնառության կազմակերպում

Ուսումնառության արդյունքների հիմնական ցուցանիշների բարելավում, կրթության որակի ապահովում

Կրթության գործընթացի մասնակիցների ակտիվ ներգրավում դպրոցի խնդիրների լուծման գործընթացներում

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ամրագրված՝ ուսուցչի մասնագիտական չափանիշներին համապատասխանող համակազմի առկայություն

Մասնագիտական բարձր որակներ ունեցող ուսուցիչների առկայություն (տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման դիմող ուսուցիչների թվի ավելացում)

Դպրոցի՝ որպես ուսուցիչների վերապատրաստման կենտրոնի կարողությունների բարելավում

## Ժամանակակից դպրոցից պահանջվում է

- սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ
- ձևավորել կարողունակ քաղաքացի
- ձևավորել սովորող և սովորեցնող անձ
- սովորողների մեջ ձևավորել այնպիսի որակներ, որոնք կնպաստեն սովորողների շարունակական զարգացմանը
- ստեղծել նպաստավոր պայմաններ նախագծային և հետազոտական գործունեության համար
- նպաստել սովորողների ինքնաճանաչմանը
- երաշխավորել սովորողների ազատությունը
- հաշնի առնել սովորողների նախասիրություններն ու կարողությունները
- դաստիարակել արտադրող քաղաքացի

## Դպրոցը բավարարում է հետևյալ կրթական կարիքները

Դպրոցը նախատեսված է 138 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները՝ ըստ լիցենզիայի

- տարրական հանրակրթական՝ 46 տեղ
- հիմնական հանրակրթական՝ 52 տեղ
- միջնակարգ հանրակրթական՝ 40 տեղ

*Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողների հետևյալ կրթական կարիքները*

- հայրենասեր և ազգասեր
- կարողունակ
- բազմակողմանի զարգացած
- սեփական դիրքորոշում ունեցող
- համամարդկային արժեքներ կրող
- մասնագիտորեն կողմնորոշված
- մրցունակ
- արդի մարտահրավերներն ընդունող
- արտադրող

Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

Ըստ Հանրակրթության մասին օրենքի

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:
2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգայինդպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:
3. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:
4. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

Ըստ զարգացման ծրագրի՝ դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, մարդկային արժանապատվության պահպանմանը, իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Կարևորված է համայնքի ակտիվ համագործակցության ապահովումը, ինչը դպրոցը կդարձնի համայնքի սոցիալ-մշակութային, տեղեկատվական- ռեսուրսային կենտրոն:

## Դպրոցի ենթակառուցվածքներն ու հնարավորությունները

- Դպրոցի հիմադիրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:
- Դպրոցի շենքը տիպային է: Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթականծրագրերի աստիճանի – միջնակարգ
- Դպրոցի աշխատանքային շաբաթը – 5 օրյա
- Դպրոցի աշխատանքային ժամակարգը – միահերթ
- Հարկայնությունը – 2 հարկանի
- Ջեռուցման եղանակը – կենտրոնացված
- Ջրամատակարարումը- շուրջօրյա
- Կից կառուցված մարզադահլիճ
- Դասարանների թիվը-12,որից երկուսը երկկոմպլեկտ,այսինքն՝10 դասարան:
- Աշակերտների թիվը՝73
- Աշխատողների թիվը՝27

Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, ՆԶՊ դասասենյակ, մարզադահլիճ, գրադարան, ճաշարան, գրադարանային ֆոնդը՝ 2500 անուն գիրք, <<Արմաթ>> ինժեներականլաբորատորիա,սպորտդահլիճ,կապկուաշակերտներիդասասենյակ,սանհանգույց :
Դպրոցն ունի մեկ մասնաշենք՝ 936,7մ,² : 2017 թվականին վերանորոգվել է շենքի տանիքը և փոխարինվել են 2-րդ հարկի պատուհանները, իսկ 2019 թվականին մասնակի վերանորոգվել է մեկ դասասենյակ, կառուցվել են դպրոցի սանհանգույցները, դպրոցի համար գնվել է ավտոբուս: 2020 թվականին առաջին հարկի պատուհանները փոխարինվել են նորով: 2021 թվականին կատարվել է երկրորդ հարկի ջեռուցման մոնտաժում և դռների փոխարինում նորով, 2022թ կատարվել է առաջին հարկի ջեռուցման մոնտաժում, վերանորոգվել է ճաշարանը, ԿԱՊԿՈՒ աշակերտների համար դասասենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցը: Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին՝ շենքում առկա են դեպի ներս բացվող մեկ պահուստային և մեկ հիմնական ելքեր:
Հաստատության նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները: Դպրոցն ունի լոկալ ջեռուցում, շուրջօրյա ջրամատակարարում:

| Շենքային պայմանները | Քանակը | Ընդհանուր մակերեսը/մ² | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|
| Երկհարկանի 1մասնաշենք | 1 մասն/շ | 936,7 | բավ |
| Դասասենյակ | 12 | 492,5 | բավ |
| Գրադարան | 1 | 25,3 | բավ |
| ԿԱՊԿու դասասնյակ | 1 | 34,4 | լավ |
| Համակարգչային սենյակ | 1 | 17,1 | լավ |
| Մարզադահլիճ | 1 | 149,6 | վատ |

| | | | |
|---|---|---|---|
| ՈՒսուցչանոց | 1 | 35,4 | լավ |
| Տնօրենի կաբինետ | 1 | 16,8 | լավ |
| <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա | 1 | 35,4 | բավ |
| Շախմատի սենյակ | 1 | 17,4 | բավ |
| Խոհանոց | 1 | 51,6 | լավ |
| Սննդի պահեստ | 1 | 2,8 | լավ |
| Սանհանգույցներ | 4 | 17,8 | լավ |
| Ռազմագիտության կաբինետ(զենքի պահեստ) | 1 | 15,6 | բավ |

## *Դպրոցի գույք, սարքավորումներ*

| Գույք,սարքավորումներ | Քանակը | Վիճակը |
|---|---|---|
| Աշակերտական սեղան | 55 | բավ |
| Աշակերտական աթոռ | 75 | բավ |
| Գրասեղան | 3 | լավ |
| Գրատախտակ | 12 | լավ |
| Լվացարան ծորակով | 8 | լավ |
| Ուսուցչական  սեղան | 12 | լավ |
| ՈՒսուցչական աթոռ | 16 | բավ |
| Ճաշարանի սեղանհարմարեցված | 4 | բավ |
| Ճաշարանի աթոռհարմարեցված | 12 | բավ |
| Պահարան | 7 | բավ |
| ՈՒսումնական  համակարգիչ | 3 | բավ |
| Աշխատանքայինհամակարգիչ | 2 | բավ |
| Պլանշետ | 1 | բավ |
| Հեռախոս | 1 | լավ |
| Համակարգչային  սեղան | 1 | բավ |
| Երկաթյա պահարան | 1 | բավ |
| Բազմոց | 1 | բավ |
| Պրոյեկտոր | 1 | լավ |
| Գազօջախ | 1 | լավ |
| Ջեռուցման կաթսա | 2 | լավ |
| Ջրատաքացուցիչ | 1 | լավ |
| Տպիչ սարքեր | 1 | բավ |
| Սկաներ + տպիչ | 1 | բավ |
| Նոթբուք | 1 | լավ |
| Պրոյեկտոր | 1 | լավ |

## Մարդկային ռեսուրսներ

Դպրոցն ունի թվով 27 աշխատակից, որոնցից 14-ը մանկավարժ՝ բարձրագույն մասնագիտական որակավորմամբ:

| N | Մարդկային ռեսուրսներ | քանակ |
|---|---|---|
| 1. | Ուսուցիչների ընդհանուր թիվ | 14 |
| 2. | Վարչական աշխատողներ | 3 |
| 3. | Սովորողների թիվ | 73 |
| 4. | Բարձրագույն կրթության ուսուցիչներ | 14 |
| 5. | Միջին մասնագիտական որակավորմամբ ուսուցիչներ | 0 |
| 6. | Ուսուցչի օգնական | 0 |
| 7. | Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | 0 |
| 8. | Առարկայական մեթոդմիավորումներ | 3 |
| 9 | Դասղեկ | 10 |
| 9. | Ուսումնաօժանդակ անձնակազմը | 9 |
| 10. | Էլեկտրոնային կառավարման դասավանդումըապահովող մասնագետ | 1 |
| 11. | Հաշվապահ | 1 |
| 12. | Գործավար կամ անձնական կառավարմանմասնագետ | 1 |
| 13. | Գրադարանավար | 0 |

## *Մանկավարժական համակազմը*

| Մանկավարժական հաստիքիանվանումը | Հաստիքի թիվը |
|---|---|
| Վարչատնեսական համակարգող | 1 |
| Տնօրեն | 1 |
| Տնօրենի տեղակալ ուսումնական գծով | 0,75 |
| Տնօրենի տեղակալ ՄԿԱ-ի գծով | 0,75 |
| ԴԱԿ | 0,75 |
| Հոգեբան | 0,75 |
| Զինղեկ և քաղպաշտպանություն | 1,3 |
| Ուսուցիչներ | 15,15 |
| Ուսուցչի օգնական | 0,5 |

## ՈՒսումնաօժանդակ անձնակազմ

| | |
|---|---|
| Էլեկտրոնային կառավարման դասավանդումը ապահովող մասնագետ | 0,75 |
| Գործավար կամ անձնական կառավարման մասնագետ | 1 |
| Հավաքարար | 3 |
| Գրադարանավար | 1 |
| Պահակ | 4 |
| Հոգեբան | 1 |
| Հնոցապան | 0,5 |
| Ընթացիկ վերանորոգման բանվոր | 0,75 |
| Վարորդ | 1 |
| Խոհարար | 0,5 |




Չնայած սովորողների բարձր առաջադիմությանը՝ դպրոցի առաջ խնդիր է դրված բարձրացնելու սովորողների ուսման որակը (ցուցանիշները՝ տոկոսով
2019 թվականին 1 աշակերտ ստացել է գերազանցության կրթաթոշակ՝ 1տարի ժամկետով: Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2021-2022 ուստավա շրջանավարտների 20%-ը ընդունվել են ԲՈւՀ, 20%-ը՝ ՆՈՒՀ:




**ԿԱՊԿՈւ աշակերտներ թիվը ըստ տարիների**



## Բյուջետային հնարավորությունները

Դպրոցի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեի հատկացումներն են, որոնցից էլ ձևավորվում են դպրոցի բյուջեի ծախսերը հետևյալ հիմնական ուղղություններով.

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Եկամտահարկի վճարումներ
- Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր
- Կոմունալ ծառայությունների վճարումներ
- Կապիտալ ծախսեր
- Այլ ծախսեր

***Դպրոցի ֆինանսական ցուցանիշներն ըստ տարիների***



Դպրոցի բյուջեի ծախսերն ըստ ոլորտների. **2022թ( տոկոսներով)**



Համատատությունում առկա հիմնախնդիրները

| Ոլորտ | Հիմնախնդիր |
| --- | --- |
| *Դպրոցի շենքային պայմանները նյութատեխնիկական բազան* | • Նյութատեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, լաբորատոր գույքի և նյութի ոչ բավարար հագեցվածություն<br>• Դպրոցում մարզագույքի բացակայություն: |
| *Կառավարման և խորհրդակցականմարմիններ* | • Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության թերացում, իրենց գործառույթների և լիազորությունների մասին իրազեկվածության ցածր մակարդակ: |
| *Մանկավարժական համակազմ* | • Ուսուցիչների շարունակական վերապատրաստման և ինքնազարգացման մեխանիզմների բացակայություն:<br>• Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի համար դիմողների ցածր տոկոս, մրցույթների, նախագծերի մասնակցության բացակայություն: |
| *Աշակերտական համակազմ* | • Ուսման նկատմամաբ մոտիվացիայի պակաս, ուսման որակի ցածր տոկոս: |
| *Ծնողական համակազմ* | • Պասիվ են տարբեր նախաձեռնություններում, արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքներում: |
| *Համատատության համագործակցությունըհամայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ* | • Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների պակաս, շարունակ հայտարարվող մրցույթների , դրամաշնորհների մասնակցության բացակայություն; |

| | |
|---|---|
| *Ուսումնական միջավայր* | • Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի անլիարժեքություն: |
| *Հաստատության տրամադրած կրթության որակը* | • Օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում, մասնակցության պակասի , չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող սաների առկայություն, ԿԱՊԿՈՒ սովորողների շոշափելի առաջընթացի դանդաղ տեմպ , ուսման՝ միջինից ցածր որակ: |
| *Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները* | • Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման ցածր տոկոս: |

## *1.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ*

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|---|---|
| ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ | |
| • Քարե երկհարկանի շինություն 936,7քմ մակերեսով, կից կառուցված սպորտդահլիճ մասնակի գույքով<br>• Տարհանման պարբերական վարժանքների անցկացում, քաղպաշտպանության պլանների առկայություն և պատշաճ իրականացում<br>• Ամբողջովին վերանորոգված սանհանգույցներ (թվով 4) ,որից մեկը հարմարեցված է հաշմանդամություն ունեցող աշակերտների համար<br>• Դասասենյակները(թվով 12) մեծ են, լուսավոր,<br>• Արմաթ>> դասասենյակի առկայություն՝ անհրաժեշտ գույքով<br>• Մեծ լուսավոր,կահավորված ուսուցչանոց<br>• Լուսավոր և օդափոխվող միջանցքներ<br>• ԿԱՊԿՈՒ երեխաների համար հարմարեցված սենյակ,դիդակտիկ նյութերով, նոր պահարանով և սեղանով:<br>• Դպրոցն ունի ամենօրյա հոսող ջուր, և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման հնարավորություն<br>• Դպրոցը գազաֆիկացված է, ջեռուցումը կենտրոնացված է<br>• Դպրոցն ունի 1 հիմնական և 1 պահուստային ելքեր<br>• Վերանորոգված և կահավորված ճաշարան, սննդի պահեստ<br>• Մուտքի մոտ ունի ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքների համար նախատեսված թեքահարթակ<br>• Լոկալ ջեռուցման համակարգի առկայություն, դասարաններում պահանջ-վող ջերմաստիճանի ապահովման հնարավորություն | • Դասասենյակներն ու միջանցքները ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք<br>• 1-ին հարկի դռները հին են<br>• Ժամանակակից պահանջներով կահավորված լաբորատորիաների, առարկայական սենյակների բացակայություն:<br>• Հանդիսությունների սրահի բացակայություն<br>• Դպրոցը չունի պատսպարաններ<br>• Ջերմամեկուսիչ պատուհանների բացակայություն<br>• Դպրոցի անբարեկարգ բակ<br>• Բացօթյա սպորտհրապարակի բացակայություն<br>• Համընդհանուր ներառմամբ ժամանակակից կրթություն կազմակերպելու թերի ուսումնական միջավայր<br>• Ժամանակակից պահանջները թերի բավարարող գրադարան<br>• Դպրոցի դաս-միջոցառումների, բաց դասերի ռեսուրս դասասենյակի բացակայություն<br>• Սպորտդահլիճի վերանորոգման կարիք |

| |
|---|
| **ՆՊԱՏԱԿ**<br>Ստեղծել այնպիսի շենքային պայմաններ, որոնք հնարավորություն կտան ձևավորել ժամանակակից կրթության կազմակերպման համար ուսումնական միջավայր ՝ հիմքում դնելով պետության և համայնքային պահանջները: |
| **ԽՆԴԻՐՆԵՐ**<br>• Բարելավել ֆիզիկական միջավայրը<br>• Ստեղծել համընդանուր ներառման համար հարմարեցված միջավայր<br>• Ապահովել ուսումնական միջավայրի անվտանգ կենսագործունեության պահանջները |
| **ՌԻՍԿԵՐ**<br>• Օրենքների փոփոխություն, որի հետևանքը կարող է լինել լիազորությունների սահմանափակումը<br>• Թերի ֆինանսավորում<br>• Ֆինանսավորման ձևի և կարգի ոչ օպտիմալ փոփոխություններ<br>• Արտակարգ իրավիճակներ |
| **ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>• Գործառույթների ճիշտ բաշխում՝ պայմանավորված կառավարման նոր մոդելով<br>• Շրջանավարտների խորհրդի միջոցով լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթում<br>• Վարչատնտեսական մասի համակարգողի հետ նույն նպատակների և տեսլականի շուրջ համախմբում |

| Գործողություններ | Պատասխանա տուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգ ման աղբյուրներ | Ժաման ակա ցույց | Ֆինանսական աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների ստեղծում և վերազինում ժամանակակից սարքավորումներով | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակազմ | Ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբարատորիա | Շինանյութ և շինարարական այլ պարագաներ Լաբորատոր սարքեր,գույք | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2026-2027 | Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր արտաբյուջետային միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սպորտդահլիճի բարեկարգում, ժամանակակից մարզագույքի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող տնօրեն | Բարեկարգված սպորտդահլիճ ժամանակակից մարզագույքով | Շինանյութ և շինարարական այլ պարագաներ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2027 | Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր արտաբյուջետային միջոցներ |
| Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների,Սմարթ գրատախտակի ներդնում | Վարչատնտեսական համակարգող տնօրեն | Սմարթ դասասենյակի առկայություն | Սմարթ գրատախտակ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-202 | Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր արտաբյուջետային միջոցներ |
| Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ | Վարչատնտեսական համակարգող | Բարելավված ուսումնական միջավայր | Շինանյութ և այլ պարագաներ | Կառավարման խորհուրդ Լիազոր մարմին Ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2029 | Լրացուցիչ միջոցներ] առկայության դեպքում |
| Կահավորել ժամանակակից գրադարան՝ հարուստ ֆոնդով | տնօրեն Վարչատնտեսական համակարգող խորհրդակցական մարմիններ | Ժամանակակից գրադարան ապահովված նյութատեխնիկական բազայով | Գույք,նոր գեղարվեստական գրքեր | Կառավարման խորհուրդ,ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2029 | Պետական բյուջեի խնայողություններ և լրացուցիչ վճա-րովի ծառայութ-յուններից առա-ջացած միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Աշակերտական գույքի համալրում | Վարչատնտեսական համակարգող, հաշվապահ | Բարելավված ուսումնական միջավայր | Առնվազն 10սեղան,20աթոռ | Կառավարման խորհուրդ,ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2029 | Պետբյուջե |
| Դպրոցի նախասրահի բարեկարգում | Վարչատնտեսական համակարգող, Հաշվապահ տնօրեն | բարեկարգված և հարմարավետ տարածքի առկայություն | Վերանորոգման համար անհրատաժեշտ նյութեր | Կառավարման խորհուրդ,ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2029 | Պետական բյուջ խնայողություններ լրացուցիչ վճարո ծառայություններից առաջացած միջոց |
| Հարց բարձրացնել լիազոր մարմնի առջև՝ հաստատության շենքային պայմանների ընդլայնման անհրա-ժեշտության և կցակառույց ունենալու առաջարկով `լաբարատորիա,արհեստանոց,հանդիսությունների դահլիճ կառուցելու նպատակով | Վարչատնտեսական համակարգող, Հաշվապահ տնօրեն | Կից կառույցի առկայություն բարեկարգ տարածք լաբարատորիայի, արհեստանոցի, հանդիսությունների դահլիճի առկայություն | Հաստատված նախագծային փաստաթղթեր, անհրաժեշտ շինարարական միջոցներ, գույք | Կառավարման խորհուրդ,ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2029 | Պետական բյուջե հովանավորներ |

## *1.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Վերջին տարիների ընթացքում դպրոցը, ունենալով բավականին սահմանափակ ֆինանսական միջոցներ, վերազինվել է նոր և արդիական գույքով, նոթբուքով (1), պլանշետով (1), պրոյեկտորով ապահովելով հնարավորինս որակյալ և ժամանակակից կրթական միջավայր: Ուսումնանյութական բազայի համալրումն ու արդիականացումը շարունակական բնույթ է կրում և համալրումը ներառված է նյութատեխնիկական բազայի գործողությունների պլանում , որն էլ կարևոր ռազմավարական ուղղություններից է: Հանրակրթության կարևոր խնդիրներից է ներառական կրթության կազմակերպում: Դպրոցում ներկայումս սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հինգ աշակերտ:Ներառական կրթության կազմակերպման անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված գործողությունների իրականացումը ևս առաջնահերթության մաս է կազմում

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | |
| • Դպրոցն ունի համակարգիչներ« սակայն ոչ բոլորն են բավարարում ուսումնական պահանջները<br>• Շախմատ առարկայի դասասենյակ՝ համապատասխան գույքով<br>• Խոհանոց՝ հագեցած անհրաժեշտ սարքավորումներով«<br>• Արմաթ ինժեներական լաբորատորիա՝ համապատասխան գույքով<br>• Գրադարան, որը համալրված է հայալեզու և ռուսերեն գրքերով<br>• Ինտերնետ կապի ապահովվածություն<br>• Դպրոցն ունի նոթբուք և պրոյեկտոր, որն օգտագործվում է ուսումնական նպատակով:<br>• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական դասասենյակ անհրաժեշտ դիդակտիկ նյութերով և գույքով: | • Դասարաններում համակարգիչների բացակայություն<br>• Տպիչ սարքերի սակավություն<br>• Դպրոցի ծրագրավորվող զանգի ավտոմատ կառավարման համակարգի բացակայություն<br>• Մարզագույքի պակաս<br>• ժամանակակից համակարգիչների և Սմարթ դասասենյակի,էլեկտրոնային գրատախտակի բացակայություն<br>• Գրադարանային ֆոնդի հարստացման,էլեկտրոնայի ն գրադարանի ստեղծման հնարավորություն<br>• Անհրաժեշտություն կա, մագնիսական, մարկերային և սովորական աշակերտական որակյալ գրատախտակների՝ թվով 5 հատ: |

**ՆՊԱՏԱԿ**

Դպրոցի նյութատեխնիկական բազայի համապատասխանեցում ժամանակակից կրթության պահանջներին

**ԽՆԴԻՐՆԵՐ**

- Աշակերտական և գրասենյակային գույքի համալրում
- Համակարգիչների և «Սմարթ» գրատախտակի ձեռքբերում

**ՌԻՍԿԵՐ**

- Ֆորսմաժորային իրավիճակներ
- Ֆինանսավորման պակասը՝ կապված աշակերտների թվի հետ
- Ֆինանսավորման բանաձևի փոփոխություն, որն այս պահին թույլ չի տալիս իրականացնել բյուջեի իրատեսական պլանավորում

**ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Շրջանավարտների, ծնողների ներգրավում կրթության զարգացման մեջ
- Տնօրենի և վարչատնտեսական համակարգողի գործառույթների ճիշտ բաշխում
- Դպրոցի աշխատանքի լուսաբանում կայքէջում

| Գործողություններ | Պատասխանատուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ | Ժամանակացույց | Ֆինանսական աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Համակարգչի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | Ուսումնական միջավայրի արդիականացում | Համակարգիչ, նոթբուք | Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025 | Պետբյուջե |
| Աշակերտական գույ-քի համալրում | Վարչատնտեսա-կան համակարգող, հաշվապահ | Առնվազն 2-3 դասասենյակի կահավորում | Սեղան,աթոռ | Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025 | Պետբյուջե |
| Մարզագույքի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | Ուսումնական միջավայրի բարելավում | Գնդակներ,բազմիթոռ,վոլեյբոլի ցանց | Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2026 | Պետբյուջե Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բազմաֆունկցիոնալ տպիչ սարքի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | Ուսումնական միջավայրի արդիականացում | Տպիչ սարք | Կառավարման խորհուրդ,ներքին գնահատման ֆինանսական հաշվետվություններ | 2024-2025 | Պետբյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| Սմարթ գրատախտակի ձեռքբերում | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | Ուսումնական միջավայրի արդիականացում | Սմարթ գրատախտակ | Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման ֆինանսա կան հաշվետվություններ | 2025-2026 | Պետբյուջե. Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում |
| Էլեկտրոնային հրաձգարան | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | Ռազմահայրենասիրական դաստիարակության ձևավորում | Էլեկտրոնային հրաձգարան | Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման ֆինանսա կան հաշվետվություններ | 2026-2027 | Պետբյուջե. Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| լաբորատորիայի ստեղծում՝ արդիական քիմիական նյութերով | Վարչատնտեսական համակարգող Հաշվապահ Գնումների համակարգող | Ժամանակակից սարքավորումներով զինված լաբարատորիա, ԲՏՃՄ առարկաներն ուսուցանելիս օգտագործել վիրտուալ լաբորատորիա | Լաբորատոր սարքեր,գույք | Կառավարման խորհուրդ, ներքին գնահատման ֆինանսա կան հաշվետվություններ | 2026-2028 | Պետբյուջե Լրացուցիչ միջոցների առկայության դեպքում |

## 1.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական հաստատության արդյունավետ գործունեության համար շատ կարևոր է տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունը, որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

1. Հաշվետվողականություն-տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցություն, որը արտահայտվում է եռամսյակը մեկ անգամ ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությամբ, տարին մեկ անգամ ուսումնադաստիարակչական աշխատանքների, հնգամյա ծրագրի կատարողականի ,ներքին գնահատման հաշվետվության միջոցով ։
2. Արդյունավետություն–տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցության արդյունքում ընդհանուր տեսլականի շուրջ համախմբվածություն,խնդիրների իրատեսական վերլուծության արդյունքում ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական և կառավարման արդյունքի գնահատում:
3. Համագործակցություն-տնօրեն-կառավարման խորհուրդ պարբերաբար քննարկումների շնորհիվ արդյունքի շարունակական բարելավում
4. Իրատեսական պլանավորում–կառավարման խորհուրդ-տնօրեն սերտ համագործակցության և կենսունակ պլանավորման արդյունքում իրականացվել է ռեսուրսների արդյունավետ բաշխում
5. Ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարում-հաշվետվությունների, ինչպես նաև ներքին գնահատման միջոցով կրթության որակի վերլուծություն

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ | |
| • Կառավարման թափանցիկ գործելակերպ<br>• Դպրոցի զարգացման ընդհանուր տեսլականին համահունչ որոշումների կայացում<br>• Դպրոցի դաստիարակաչական աշխատանքների մշտապես աջակցում<br>• Սերտ կապը դպրոցի խորհրդակցական մարմինների հետ /միջոցառումներ, սեմինարներ, քննարկումներ/<br>• Օրինակելի փաստաթղթաշրջանառություն<br>• Համագործակցում է համայնքի, դպրոցի տնօրենության և մյուս խորհրդակցական մարմինների անդամների հետ, պատրաստակամ են ստեղծել արդյունավետ աշխատանքային միջավայր, սատարել ընթացիկ խնդիրների լուծմանը: | • Խորհրդի կարևորության նվազեցում<br>• Խորհրդի անդամների մոտիվացիայի պակաս<br>• Կառավարման խորհրդի անդամների հաճախակի փոփոխություն<br>• Լիազորությունների ոչ ճիշտ գիտակցում<br>• Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ:<br>• Խորհրդի անդամի գործառույթների վերաբերյալ իրազեկվածության, օրենսդրական փոփոխությունների մասին պակաս ինֆորմացված լինելը:<br>• Խորհրդի ձևավորման կարգի փոփոխություն |

**ՆՊԱՏԱԿ**

Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում, կառավարման խորհրդի դերի և նշանակության ամրապնդում

**ԽՆԴԻՐՆԵՐ**

- Կարևորել և հստակեցնել խարհրդակցական մարմնի անդամների լիազորությունները
- Կարևորել կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցությունը , մոտիվացնել առաջարկություններով հանդես գալը

**ՌԻՍԿԵՐ**

- Կառավարման խորհրդի լիազորության սահմանափակում
- Կառավարման մոդելի փոփոխություն
- Կառավարման նոր մոդելով պայմանավորված լիազորությունների սահմանափակում

**ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Կառավարման խորհրդի լիազորությունների վերաբերյալ պատշաճ իրազեկում
- Դպրոցների նոր կառավարման մոդելով պայմանավորված խորհրդի անդամների իրազեկում փոփոխությունների վերաբերյալ

| Գործողություններ | Պատասխանատուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ | Ժամանակացույց | Ֆինանսական աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Խորհրդի անդամի վերապատրաստում | Տնօրեն<br>Խորհրդի անդամներ<br>Խորհրդի նախագահ | Տարին 1 անգամ իր գործառույթներին պատշաճ տիրապետող և մոտիվացված խորհրդի անդամ: | Խորհրդի ձևավորման կարգ | Ներքին գնահատման հաշվետվություն,<br>Խորհրդի նախագահ | 2024-2025 | մարդկային ռեսուրս |
| Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցություն խթանում | Տնօրեն<br>Խորհրդի նախագահ | Տարին 1 անգամ մասնակցային կառավարման մեխանիզմների<br>Տիրապետող կառավարման խորհուրդ | Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների ձևավորման կարգ | Ներքին գնահատման հաշվետվություն,<br>Խորհրդի նախագահ | 2024-2029 | մարդկային ռեսուրս |
| Միացյալ խորհրդի համագործակցության խթանում | Տնօրեն<br>Խորհրդի նախագահ<br>Խորհրդի անդամներ | Իր գործառույթներին պատշաճ տիրապետող և մոտիվացված խորհրդի անդամ: | Կառավարման խորհրդի և խոր-հրդակցական մարմինների ձևավորման կարգ | Ներքին գնահատման հաշվետվություն,<br>Խորհրդի նախագահ | 2024-2029 | մարդկային ռեսուրս |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

**Ծնողական խորհուրդը** կատարում է իր պարտականությունները՝ կանոնադրությամբ իրեն վերագրված լիազորությունների շրջանակներում: Ծնողխորհուրդը պարբերաբար ծանոթանում է ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքին, սովորողների կիսամյակային և տարեկան առաջադիմությանը, կազմակերպում է տարբեր միջոցառումներ, կարևորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը դպրոցում: Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների առավել ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցելու միջոցով:

Ծնողական խորհրդի աշխատանքները.

- Մասնակցություն կառավարման խորհրդի աշխատանքներին
- Արտադասարանական, արտադպրոցական կրթության, էքսկուրսիաների կազմակերպումը
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպում
- Պայմանավորված համայնքի առանձնահատկությամբ՝ դպրոցի կողմից աշակերտների շրջանում վատ սովորությունների կանխարգելման գործողությունների ակտիվ մասնակցությունը
- Ընտանեկան բռնության դեպքերի հայտնաբերում և իրազեկում դպրոցին
- Համայնքի խոցելի լինելու պատճառով՝ սոցանապահով երեխաներին օգնություն տրամադրելու

**Աշակերտական խորհուրդն** իր անդամների միջոցով ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, օգնում է տնօրենությանը դպրոցի շրջակայքի բարեկարգման,կանաչապատման աշխատանքներում, շաբաթօրյակների անցկացման ժամանակ:

Աշակերտական խորհուրդը մշտապես ներգրավված է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքում, արտահայտում է ազատ կարծիքներ և ներկայացնում առաջարկներ:

Աշակերտական խորհրդի աշխատանքները.

Ըստ սահմանված կարգի ժամանակին կազմակերպվել են աշակերտական խորհրդի աշխատանքները

Մշտապես ներգրավվել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում, ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպմանը

Կապող օղակ է դպրոցի և համայնքի միջև,

| Ուժեղ կողմեր | Թույլ կողեր |
|---|---|
| ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ | |
| • Դպրոց-ծնող առողջ համագործակցություն<br>• Ուսումնական հաստատության կանոնադրությամբ մասնակցություն դպրոցի կառավարմանը<br>• Համագործակցություն մանկավարժական աշխատողների հետ կրթության կազմակերպման հարցով<br>• Իրավունքների և պարտականությունների գիտակցումը<br>• Մասնակցությունը ուսումնական հաստատության ներքին գնահատմանը և կրթական ծրագրերի իրականացմանը<br>• Ակտիվ մասնակցությունը արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը<br>• Ինքնավարության և ինքնակառավարման դրսևորմամբ օժտված մարմին լինելը<br>• Ակտիվ մասնակցությունը դպրոցի գործունեությանը<br>• Կարծիքների ազատ արտահայտում<br>• Առաջարկություններով հանդես գալը խորհրդակցական մարմիններում<br>• Սովորողների իրավունքներին և պարտականություններին տիրապետելը և ըստ անհրաժեշտության դիրքորոշում արտահայտելը<br>• Մասնակցությունը ԿԳՄՍ լիազոր մարմնի, համայնքի կողմից կազմակերպած զեկույցներին, միջոցառումներին | • Լիազորությունների և պարտականությունների գիտակցման պակաս<br>• Հասարակական աշխատանքներում ներգրավելու մոտիվացիայի պակաս<br>• Մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխայի դաստիարակության պահանջների ոչ լրիվ գիտակցում<br>• Թույլ մասնակցություն հիմնական պարտադիր կրթությունը իրականացնելու գործընթացին<br>• Այլ ծրագրերի մասնակցության մոտիվացիայի պակաս<br>• Թերի է ծնողների գործուն մասնակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ներհամայնքային միջոցառումներին:<br>• Անհրաժեշտ է խթանել նաև ծնողների նախաձեռնողականությունը:<br>• Աշակերտների ներգրավվածության պակաս դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակմանը |

ՆՊԱՏԱԿ

Խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում, դրանց լիարժեք և արդյունավետ ներգրավում դպրոցի զարգացման գործում:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ամրապնդել դպրոց -ուսուցիչ- ծնող-սովորող կապը
- Իրականացնել ինքնավարության խթանմանն ուղղված նախաձեռնություններ
- Զարգացնել խորհրդակցական մարմինների կարողությունները
- Խթանել հետաքրքրությունը դեպի դպրոցը
- Նախաձեռնողականության մոտիվացիայի բարձրացում

ՌԻՍԿԵՐ

- Լիազորությունների սահմանափակում
- Աշակերտի գերծանրաբեռնվածություն
- Արտաքին միջավայրում արատավոր երևույթների ազդեցություն

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արատավոր երևույթների ազդեցությունը նվազեցնող իրազեկման գործողությունների իրականացում/ ֆիլմերի դիտում, հանդիպումներ համայնքային կառույցների հետ, զրույցներ,քննարկումներ
- Նոր ՀՊՉ-ով նախատեսված աշակերտի ծանրաբեռնվածության նվազեցում

| Գործողություններ | Պատասխանատուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ | Ժամանակացույց | Ֆինանսական աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Սովորողների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված զրույցներ, քննարկումներ | Դասղեկներ Աշակերտական խորհուրդ | Սովորելու նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող սովորող: Տարեկան առնվազն 2 անգամ մոտիվացնող նախաձեռնությունների իրականացում: | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Տնօրենի հաշվետվություն, Ծնողի արձանագրություն | 2024-2029 պարբերաբար | մարդկային ռեսուրս |
| Կարողունակությունների զարգացում | Դասղեկներ Ուսուցիչներ | ՀՊՉ-ի ամրագրված կարողունակություններով օժտված աշակերտ Առնվազն | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Դասղեկի,ուսուցչի հաշվետվություն, աշխորհրդի | 2024-2029 | մարդկային ռեսուրս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 ուսումնական նախագիծ յուր. դասարանում: | | արձանագրություն | | |
| Ռազմահայրենասիրական թեմաներով ուսումնադաստիարակչական միջոցառումների կազմակերպում | ՆԶՊ ուսուցիչ Դասղեկներ | Տարին 1 անգամ հրաձգության մրցույթ | Հրաձգարան, զենք,փամփուշտ | ՆԶՊ ուսուցչի հաշվետվություն | 2024-2025 | մարդկային ռեսուրս |
| Կարգապահության բարելավում | Դասղեկներ Աշակերտական խորհուրդ | Կարգապահության բարելավում | Ուսումնական նյութեր,ՏՀՏ գործիքներ | Դասղեկի հաշվետվություն, աշխորհրդի արձանագրություն | 2024-2029 | մարդկային ռեսուրս |
| Բռնության և հոգեբանական ճնշման դեմ ուղղված նախաձեռնություն-ներ | Դասղեկներ | Իր իրավունքները գիտակցող աշակերտ | ՏՀՏ գործիքներ, պաստառներ | Տնօրենի,դասղեկի հաշվետվություն | 2024-2029 | մարդկային ռեսուրս |

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դպրոցի **մանկավարժական կոլեկտիվը** նվիրված մանկավարժների խումբ է, որի նպատակը սովորողին ճիշտ դաստիարակություն և օգտակար գիտելիք տալն է: Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար խորհրդակցություններ են հրավիրվում՝ **մեթոդմիավորումների** անդամների մասնակցությամբ: Մեթոդական միավորումներում ընդգրկված են հաստատության բոլոր ուսուցիչները: Դպրոցում գործում է երեք մեթոդական միավորումներ՝

1. « Տարրական»
2. «Հումանիտար»
3. «ԲՏՃՄ»

Նիստերի ժամանակ քննարկվում են մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը,մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող բազմաթիվ այլ հարցեր:

Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ճիշտ ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացի, դասավանդման ընթացիկ վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջների և պետական ծրագրերի կատարումը:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ | |
| • Կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպում<br>• Ծրագրերի պատշաճ իրականացում<br>• Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ<br>• Մանկավարժական մեթոդական արդի քննարկումներ և խելամիտ որոշումների կայացում<br>• Երեխայի շահերի և իրավունքների պաշտպանություն<br>• Միջդպրոցական մեթոդական միավորումների մեկնարկում<br>• Սկսնակ ուսուցիչների հետ մասնագիտական, մեթոդական քննարկումներ, վերլուծություններ<br>• Ներդպրոցական մեթոդական միավորումների առողջ համագործակցություն և վերլուծություն<br>• ՆԴՎ պլանով սահմանված վերահսկողական գործառույթների իրականացում | • Պարտականությունների թյուրըմբռնում<br>• Առարկաների մեկական մասնագետի առկայություն<br>• Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացման փորձի պակաս<br>• Նոր ՀՊԶ-ի ներդրման հետ կապված հստակ մեխանիզմների պակաս |

**ՆՊԱՏԱԿ**

Խորհրդակցական մարմինների գործունեության բարելավում, դրանց լիարժեք և արդյունավետ ներգրավում դպրոցի զարգացման գործում

**ԽՆԴԻՐՆԵՐ**

- Մանկավարժական խորհրդի գործառույթների իրականացում ( ըստ կանոնադրության)
- Մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների կարողությունների զարգացում
- ՆԴՎ ձևերի սահմանում, իրագործում և վերահսկողություն
- Մոտիվացիայի ավելացում
- Նորարարական մեթոդների կիրառման և ՀՊՉ նոր գործարկվող ծրագրի ներդրում և վերահսկողություն

**ՌԻՍԿԵՐ**

- Իրավունքների ոտնահարում
- Ֆորսմաժորային իրավիճակներ
- Գործառույթներիսահմանափակում

**ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Բարձրացնել մանկավարժի վարկանիշը համայնքում և հասարակության մեջ
- Իրավունքների և նորմատիվ իրավական ակտերի իրազեկում, տեղայնացում

| Գործողություններ | Պատասխանա տուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ | Ժամանա կացույց | Ֆինանսական աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Սեմինարների կազմակերպում, ներքին իրավական ակտերի և կրթության ոլորտի այլ օրենքների վերաբերյալ | Տնօրեն | Տարին 2 անգամ դպրոցի գործունեության կարիքի գնահատում | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Ներքին գնահատման հաշվետվություն, ՈւԴԱՊ հաշվետվություն | 2024-2029 Տարին երկու անգամ | մարդկային ռեսուրս |
| Կարողությունների զարգացման սեմինարների կազմակերպում մանկավարժական | Տնօրեն | Տարին 2 անգամ սեմինարներ օրենսդրական փոփոխությունների, Նոր կարգերի, փաստաթղթաշրջանառության | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | ՈւԴԱՊ հաշվետվություն | 2024-2029 Տարին երկու անգամ | մարդկային ռեսուրս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| խորհրդի համար | | վերաբերյալ | | | | |
| ՆԴՎ ձևերի և գործիքների մշակում | Տնօրեն | Մ/մ նախագահներից և ուսումնական գծով տնօրենի տեղակալից բաղկացած աշխատանքային | Հիմնարար փաստաթղթեր | Ներքին գնահատման հաշվետվություն, ՈւԴԱՊ հաշվետվություն | 2024-2029 | մարդկային ռեսուրս |
| Միջդպրոցական մեթոդական միավորումների համագործակցություն | Տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող Մ/մ նախագահներ | յուրաքանչյուր տարի 1 անգամ առաջավոր փորձով նորարարական մեթոդներով օժտված մ/միավորման նախագահներ և անդամներ | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Ներքին գնահատման հաշվետվություն, ՈւԴԱՊ հաշվետվությունց | 2024-2029 Տարին մեկ անգամ | մարդկային ռեսուրս |

## *1.4 ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ*

Դպրոցի իրատեսական գործունեության կրթության իրականացման, որակի ապահովման, ինչպես նաև ՀՀ ապագա կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորման գործում մեծ ազդեցություն ունի դեռևս միջնակարգ դպրոցում աշակերտների մասնակցությունը համայնք-դպրոց,կրթության կառավարման մարմիններ-դպրոց և այլ կազմակերպությունների հետ համագործակցություններում:Լիազոր մարմինների և վարչական շրջանի ներկայացուցիչները պարբերաբար հրավիրվում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Աշակերտները ներկայանում են հետազոտական–նախագծային աշխատանքների միջոցով, որը վերաբերում է համայնքի զարգացման առանձնահատկություններին:

Հաստատության վարչական և մանկավարժական կազմը ներգրավված է եղել ԿԳՄՍ-ի և լիազոր մարմնի կողմից ներկայացված տարբեր օրենքների քննարկումներին: Շարունակական համագործակցություն կա «ԳԹԿ»-ի հատկապես քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականցման շուրջ, ԿՏԱԿ-ի, «ԿԶՆԱԿ>>-ի հետ:

Ուսուցիչներն ու տնօրենությունը ընդգրկվում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին: Շարունակվում է ուսուցիչների մասնակցությունը նոր չափորոշչային պահանջների ներդրման վերաբերյալ վերապատրաստումներին:

Հաշվի առնելով ծնողական համայնքի պահանջարկը և սովորողների նախասիրությունները՝ դպրոցում գործում են առարկայական 4 խմբակներ՝ «Իմ հայրենիքը, իմ բնօրրանն է» «Ընթերցանության գաղտնիքերը»,«Ընթերցանություն և ասմունք», «Հետաքրքրաշարժ մաթեմատիկա» ,կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, սովորողների ժամանցին ուղղված ծրագրեր

**Համագործակցություն համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ**

1. Աշակերտական, մանկավարժական համակազմի մասնակցությունը համապետական շաբաթօրյակներին
2. Ծառատունկեր
3. Տարաբնույթ միջոցառումներ՝ ռազմահայրենասիրական, մշակութային, գեղագիտական ճաշակ ձևավորելու, բեմական, գրական խոսքի զարգացման, արվեստի տարբեր ճյուղերի, նշանավոր գործիչների, նրանց ստեղծագործությունների հետ կապի հաստատում
4. Ներդպրոցական և արտադպրոցական մրցութային միջոցառումների կազմակերպում
5. Այցելություն թանգարաններ, Եռաբլուր, պատմամշակութային արժեք ունեցող վայրեր ;
6. Տարբեր սպորտաձևերում և մշակութային տարբեր մրցույթ- փառատոններում դպրոցի սաների գրանցած հաջողությունների լուսաբանում:
7. Հանդիպումներ ԱԻՆ , ՀՀ ոստիկանության աշխատակիցների հետ, ովքեր հանդես են եկել դասախոսություններով,ինչպես նաև տարհանման հատուկ ուսումնավարժանքի անցկացում:

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|---|---|
| **Համագործակցություն համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ** | |
| • Մշտական համագործակցութուն տարբեր կառույցների հետ՝ ԿԳՄՍՆ ԼՈՌՈւ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ,ԳԹԿ,ԿՏԱԿ. ՏՄԱԿ ,ԿԶՆԱԿ<br>• Մշտական մասնակցություն ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպվող քննարկումներին,խորհրդատվություննե րին/ ՀՊՉ, նոր կարգեր և այլն/<br>• Դպրոցական խնդիրների շուրջ համայնքային դպրոցների հետ քննարկումների նախաձեռնում<br>• 44-օրյա պատերազմի մասնակից սաների հետ մշտական կապի ապահովում<br>• Դպրոցը կատարում է Լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի օրենքին չհակասող հանձնարարականները, մասնակցում քննարկումների<br>• Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքային միջոցա-ռումներին, համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության<br>• Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնա-րարականների կատարումը:<br>• Արդյունավետ հաղորդակցություն համայնքի և տարբեր կառույցների հետ<br>• Համագործակցության շրջանակներում տարբեր համատեղ միջոցառումների կազմակերպում<br>• Դպրոցի մասին տեղեկատվության ներկայացում սոցիալական ցանցերի, դպրոցի կայքէջի և առցանց այլ հարթակների միջոցով | • Դպրոցի կողմից ծնողական համայնքի հետ Կառույցների հետ առցանց շփման հասանելիության խնդիր<br>• Միջազգային կառույցների հետ շփման պակաս<br>• Միջազգային լավագույն փորձի տեղայնացման պակաս<br>• համագործակցության կարևորում<br>• Բավարար մակարդակի վրա չէ համայնքի և մարզի այլ հաստատությունների հետ համագործակցությունը<br>• Քույր դպրոցների բացակայություն: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՆՊԱՏԱԿ<br>• Կառուցել արդյունավետ հաղորդակցություն կրթության ոլորտի բոլոր դերակատարների հետ՝ ընդլայնելու դպրոցի համագործակցության շրջանակները շահառու լայն խմբերի հետ, ինչպես նաև տեղական և միջազգային կառույցների հետ:<br>• Դպրոցների, համայնքի հետ՝ մասնակից դարձնելով սովորողների արտադպրոցական, արտադասարանական դաստիարակությանը<br>• ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԴԿՏՀ-ի հետ դպրոցի աշխատանքային գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով<br>• Առողջապահական կառույցներ<br>• Զորամասեր/ Զինկոմիսարիատ<br>• ԱԻՆ<br>• Ոստիկանության հետ հանդիպումներ | | | | | | |
| ԽՆԴԻՐՆԵՐ<br>• Համայնքում դպրոցի մրցունակության բարձրացում և բարի համբավի ամրապնդում<br>• Համայնքային, մշակութային և կրթական առաջատար դառնալու հավակնություն<br>• Շահագրգիռ կառույցների հետ մշտական և փոխադարձ շփման ապահովում<br>• Առցանց շփման հասանելիության խնդրի վերացում | | | | | | |
| ՌԻՍԿԵՐ<br>• Ֆորսմաժորային իրավիճակներ<br>• Համայնքի կողմից շփման մոտիվացիայի պակաս<br>• Կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների համագործակցության նվազում<br>• Համայնքի հետ համագործակցության սահմանափակ հնարավորություններ<br>• Միջազգային կառույցների և ՀԿ-ների կողմից կրթական ոլորտում իրականացվող սահմանափակ ծրագրեր | | | | | | |
| ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>• Համայնքի հետ ընդհանուր միջոցառումների և ծրագրերի իրականացում<br>• Դպրոցի աշխատանքի թափանցիկ լուսաբանմամբ կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների համագործակցության մոտիվացիայի ավելացում | | | | | | |
| Գործողություններ | Պատասխանատուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ | Ժամանակացույց | Ֆինանսական աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սպորտլանդիայի կազմակերպում | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | Սովորողների հետաքրքրությունների և կարողությունների զարգացում | Համազգեստ | Լիազոր մարմին, խորհրդի նախագահ, | 2024-2029 Տարին մեկ անգամ | մարդկային ռեսուրս |
| Համագործակցություն համայնքի հետ տարբեր միջոցառումների շրջանակներում | ՄԿԱ գծով համակարգող Տնօրենի տեղակալ | Համատեղ մշակված ծրագրերի առկայություն /համայնքային շաբաթօրյակների, ազգային տոներին նվիրված միջոցա-ռումների կազմակերպում/ | ՏՀՏ գործիքներ, պաստառներր | Տնօրեն, Դասղեկ | 2024-2029 Պարբեր աբար | Պետբյուջե |
| ԱԻՆ, ոստիկանություն, առողջապահական կառույցների կողմից իրազեկման դասեր, միջոցառումներ | ՆԶՊ ուսուցիչ Դասղեկներ | /սեպտեմբերի 21, հունվարի 28/ Զենքից օգտվելու և կրակելու կարողությունների զարգացում | Պաստառներ, ՏՀՏ գործիքներ | Տնօրեն, Դասղեկ | 2024-2029 Պարբեր աբար | Պետբյուջե |
| Շաբաթօրյակների կազմակերպում | Աշակերտներ Դասղեկներ | Տեղեկատվության հասանելիության առկայություն | Ավել,ձեռնոց, տոպրակներ | Տնօրեն Աշակերտներ Դասղեկներ | 2024-2029 Պարբեր աբար | Պետբյուջե |
| Ստեղծագործությունների միջդպրոցական քննարկումներ, վիկտորինաների, մրցույթների կազմակերպում | Ուսուցիչներ Մ/մ ախագահներ | Տարին առնվազն երկու հանդիպում այլ դպրոցների համագործակցության շրջանակներում | Տնօրեն, Ուսուցիչներ Մ/մ նախագահներ | Տնօրեն, Ուսուցիչներ Մ/մ նախագահներ | 2024-2029 Տարին երկու անգամ | մարդկային ռեսուրս |

## *1. 5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ*

Ուսումնական հաստատության առաքելությունը բոլոր սովորողների համար հասանելի կրթական գործունեության իրականացումն է: Այն իրականացնելու համար անհրաժեշտ է անվտանգ, ապահով միջավայր, նյութատեխնիկական բազա, մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև սովորողների առողջության ամրապնդման և ֆիզիկական զարգացման անհրաժեշտ պայմաններ: Հարկավոր է ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ կրթական գործունեության իրականացումը կազմակերպվում է բացառապես ժողովրդավարության հիմունքներով՝ ապահովելով կազմակերպիչների և մասնակիցների իրավունքների իրացում և իրենց կողմից պարտականությունների գիտակցում:

Դպրոցում առկա են հակահրդեհային անվտանգության միջոցներ, միջանցքներում փակցված են արտակարգ իրավիճակների տարհանման պլանները , իսկ աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու հմտություններին և վարքականոններին: Ըստ ժամանակացույցի, կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, զրույցներ և տարհանումներ:

Դպրոցում, ըստ սովորողների հետաքրքրությունների, գործում են տարբեր խմբակներ, ինչը շատ կարևոր նշանակություն ունի երեխաների արտադպրոցական ուսուցումը կազմակերպելու համար:

Դպրոցի տնօրենությունը, մանկավարժական համակազմը, լավ գիտակցելով համայնքի առանձնահատկությունները, հետևողական աշխատանքներ են տարել համայնքում արժանապատվության ոտնահարման, հուզական, ահաբեկման (բուլինգի) կամ ֆիզիկական բռնության դեպքերը կանխելու համար: Կարևոր է նաև դպրոցի կողմից իրականացված զրույց –քննարկումներին ծնողական համայնքի մասնակցությունը:

Նախորդ հինգ տարիների ընթացքում դպրոցի տնօրենության և համակազմի ջանքերով կատարվել են բազմաթիվ աշխատանքներ շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական միջոցների համալրման ուղղությամբ և ուսումնական միջավայրի անհրաժեշտ պայմանների ստեղծման համար: Ձևավորվել է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ խնդիրները միասին լուծելու, պատասխանատվություն կրելու և որոշումներ կայացնելու հարցում: Վերանորոգվել են սանհանգույցներ, ձեռք են բերվել ուսումնական և դիդակտիկ պարագաներ, աշակերտական գույք, ՏՀՏ գործիքներ՝ կրթության կազմակերպման ժամանակակից պահանջները ապահովելու համար,մարդատար ավտոբուս,վերանորոգվել է դասասենյակ ԿԱՊԿու աշակերտների համար,համապատասխան գույքով:

Մանկավարժական համակազմի հետևողական աշխատանքի և ձևավորված բարոյահոգեբանական առողջ միջավայրի շնորհիվ դպրոցում սովորողների կամ աշխատակիցների կողմից չի արձանագրվել հուզական (ծաղրել, մականուններ կպցնել, անհիմն նկատողություններ անել, ոչ օբյեկտիվ գնահատականներ տալ, այլ երեխաների ներկայությամբ արժանապատվության ոտնահարել և այլն), բուլլինգի կամ ֆիզիկական բնույթի բռնության և ոչ մի դեպք: Ենթակառուցվածքների համագործակցային և մասնակցային մոտեցումների ներդրման արդյունքում դպրոցում իրականացվող տարբեր բնույթի միջոցառումները նպաստել են համակազմի և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշման և սովորողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը:

<table>
<tr><th>Ուժեղ կողմեր</th><th>Թույլ կողմեր</th></tr>
<tr><td colspan="2">ՈՒսումնական միջավայր</td></tr>
<tr><td>
<ul>
<li>Երեխայի,ծնողի,մանկավարժի իրավունքների իրացում և պարտականությունների գիտակցում</li>
<li>Առողջ ֆիզիկական և հոգեբանական միջավայրի առկայություն</li>
<li>Ծնող-դպրոց կապի կարևորում արտադասարանական,արտադպրոցա կան կրթության կազմակերպման հարցում</li>
<li>Հավասար պայմանների առկայություն բոլոր սովորողների համար</li>
<li>Ներառական կրթության կազմակերպման համար որոշ հարմարեցումների առկայություն (մուտքի թեքահարթակ, դասասենյակ ուսումնադիդակտիկ և այլ միջոցներ)։</li>
<li>Առկա են արտակարգ իրավիճակների տարահանման և ԱՌԿ պլաններ։</li>
<li>Մասնակցային կառավարում</li>
<li>Դպրոցն ունի իր վեբկայքն ու ակտիվ է սոցիալական հարթակներում։</li>
<li>Ձևավորված է փոխվստահության և համագործակցային միջավայր։</li>
<li>Առկա է խնդիրները լուծելու և որոշումներ ընդունելու մասնակցային մոտեցումների ձևավորված մշակույթ։</li>
<li>Սովորողների և համակազմի կողմից պատասխանատվություն ստանձնելուպատրաստակամություն</li>
<li>Սովորողներն ու աշխատակազմը տեղեկացված են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին,առկա անվտանգության միջոցների տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին։</li>
</ul>
</td><td>
<ul>
<li>Ֆինանսական միջոցների սղություն</li>
<li>Պարտականությունների ոչ լիարժեք գիտակցում</li>
<li>Ենթակառուցվածքների անբավարար վիճակ</li>
<li>Զգացվում է համակարգչային կաբինետի սարքավորումների նորացման անհրաժեշտություն։</li>
<li>Առկա չէ տեխնոլոգիայի կաբինետ, որը կնպաստի տեխնոլոգիական հմտությունների զարգացմանը։</li>
<li>Ոչ բոլոր դասասենյակներն են ապահոված ՏՀՏ միջոցներով։</li>
<li>Կա սովորողների՝ ըստ հետաքրքրության ակումբների հնարավորությունների ընդլայնման սուր անհրաժեշտություն</li>
<li>Զգացվում է համակարգչային կաբինետի սարքավորումների նորացման անհրաժեշտություն։</li>
<li>Մարզադահլիճի ոչ բարվոք վիճակ և մարզագույքի բացակայություն։</li>
</ul>
</td></tr>
</table>

ՆՊԱՏԱԿ

- Հավասար պայմաններով, բազմակարծիք մասնակցային միջավայրի ձևավորում՝ սովորողների և աշխատողների առողջության և կյանքի անվտանգության ապահովմամբ
- Սովորողների կարողունակությունների ձևավորմանը նպաստող, ուսման որակի բարելավմանն ուղղված արդյունավետ ուսումնական միջավայրի ապահովում և շարունակական զարգացում

ԽՆԴԻՐՆԵՐ

- Բազմակարծիք ներառական միջավայրի ստեղծում
- Հավասար պայմանների ապահովում
- Իրավունքների և պարտականությունների գիտակցում
- Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման ձևերի ներդրում:

ՌԻՍԿԵՐ

- Սովորողների մոտիվացիայի պակաս
- Նոր կառավարման մոդելով պայմանավորված գործառույթների թյուրըմբռնում
- Ֆինանսավորման անբավարար միջոցներ

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
- Նոր կառավարման մոդելով պայմանավորված գործառույթների գիտակցում, պարտականությունների ճիշտ բաշխում
- Առկա միջոցների արդյունավետ կառավարում
- Ցուցահանդես-վաճառքների կազմակերպում
- Սովորողների նախաձեռնությունների խրախուսման մեխանիզմների մշակում:
- Աշակերտական խորհրդի դերի բարձրացմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում:

| Գործողություններ | Պատասխանատուներ | Արդյունքների գնահատման չափանիշ | Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ | Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ | Ժամանակացույց | Ֆինանսական աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Անվտանգ ուսումնական միջավայրի ձևավորում | Վարչատնտեսական համակարգող | Անվտանգ միջավայրի ստեղծում | կրակմարիչներ | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2026-2027 | Պետբյուջե |
| Դպրոցի նկատմամբ | Դասղեկներ | Կարգապահական | Գույք | Տնօրեն | 2024-2029 | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| սրտացավության ձևավորում | Ծնողներ Աշակերտներ | կանոնների ստուգում | | Վարչատնտեսական համակարգող | | |
| Զրույց-սեմինարներ, քննարկումներ, տեսաֆիլմի դիտում, հանդուրժողականությա ն,վնասակար սովորությունների և մեդիագրագիտության վերաբերյալ | Ուսուցիչներ Դասղեկներ | Տեղեկատվության հասանելիության առկայություն | ՏՀՏ գործիքներ, | Տնօրեն Ուսուցիչներ Դասղեկներ | 2024-2029 Պարբեր աբար | Պետբյուջե |
| Մասնակցային բազմակարծիք կրթական միջավայրի ձևավորում | Փոխտնօրեն, ուսուցիչներ, դասղեկներ | Տեղեկատվության հասանելիության առկայություն | ՏՀՏ գործիքներ, | Տնօրեն, Փոխտնօրեն, ուսուցիչներ, դասղեկներ | 2024-2029 | Պետբյուջե |
| Բռնության, հոգեբանական ճնշման որևէ փորձի կանխարգելում | Փոխտնօրենն, ուսուցիչներ, դասղեկներ | Յուրաքանչյուր կիսամ-յակ առնվազն 1 անգամ տեսանյութի քննարկում, զեկույց կամ դասախոսություն | ՏՀՏ գործիքներ, | Տնօրեն Փոխտնօրեններ, ուսուցիչներ, դասղեկներ | 2024-2029 | Պետբյուջե |

## *1.6 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ*

Դպրոցն ունի 14 մանկավարժական աշխատողներ: Դպրոցի բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն համապատասխան կրթություն, յուրաքանչյուր տարի ըստ կարգի 1/5-րդը մասնակցել է հերթական ատեստավորման վերապատրաստմանը և ատեստավորվել է: Ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 15,15 ժամ է: 2018թ.-ից մինչև 2024թ. դպրոցի մեկ ուսուցիչ ունեցել է առաջին աստիճանի տարակարգ:

Ժամանակակից կրթություն կազմակերպելու համար շատ կարևոր է ուսուցչի կողմից պաշտոնային պարտականությունների գիտակցումը, ինչպես նաև հետևյալ նորմատիվ իրավական ակտերին տիրապետումը.

1. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը:
2. Առարկայական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթերը:
3. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, բժշկական օգնության հիմունքները:
4. Աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները զարգացնող միջոցառումներ.

- Իրականացվել են հերթական ատեստավորումներ,ՏՀՏ վերապատրաստումներ (ԿՏԱԿ-ում, էլեկտրոնային մատյանում աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար)
- Կազմակերպվել են վիկտորինաներ, առարկայական մրցույթներ, միջառարկայական կապերով համեմված դասեր, որոնք նպաստել են նաև մանկավարժական մասնագիտական որակի և հմտության զարգացմանը:
- ՆԴՎ շրջանակներում պարբերաբար կատարվել են դասալսումներ
- Մասնակցություն ՀՊՁ պարզաբանման ներդպրոցական վերապատրաստումներին
- Դասղեկների վերապատրաստումներ
- Անհատական կարիքից բխող արտաքին վերապատրաստումներ՝ ուսուցչի ցանկությամբ և նախաձեռնությամբ
- Սկսնակ ուսուցիչների աջակցության համակարգի առկայություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ | |
| • Դասավանդման ընթացքում սովորողակենտրոն մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու հմտություններին տիրապետող ուսուցիչներ<br>• Գնահատման այլընտրանքային ձևերի իմացության և դրանց կիրառման անհրաժեշտությունը ընկալող ուսուցչական համակազմ<br>• Հեռավար ուսուցման հարթակների օգտագործման հմտություններին տիրապետող համակազմ<br>• Գործընկերների հետ համագործակցության և փորձի փոխանակման ձևերի հաստատված մշակույթի առկայություն, խնդիրները մասնակցային ձևաչափով լուծելու պատրաստակամություն | • Առարկայական մասնագետների մեկական լինելը<br>• Դասարանների երկկոմպլեկտ լինելը՝, որի արդյունքում դժվարանում է մանկավարժի աշխատանքը<br>• Աշխատանքի նկատմամբ գրավչության պակաս<br>• Որոշ ուսուցիչների մոտ ՏՀՏ գիտելիքների բարելավման անհրաժեշտություն<br>• Կամավոր ատեստավորման մոտիվացիայի պակաս<br>• Տարակարգ ունեցող ուսուցիչների պակաս<br>• Դպրոցի աշխարհագրական դիրքով պայմանավորված նոր կադրերի պակաս<br>• Ուսուցիչների հեղինակության պակաս հասարակության մեջ<br>• Ուսուցման և գնահատման մեթոդների կիրառման Հմտությունների բարելավման կարիք<br>• Հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների զարգացման կարիք<br>• Սովորողների՝ նախագծային աշխատանքներ կատարելու, առաջնորդման կարողությունների բարելավման անհրաժեշտություն<br>• Կամավոր ատեստավորման դիմելու մոտիվացիայի պակաս և մտավախություն: |




2022թ. օգոստոսին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանվել են հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները, որոնք ուսուցչի մասնագիտական զարգացման, գիտելիքների և աշխատանքային գործունեության կարողությունների պատասխանատվության նկարագիրն են: Այդ չափանիշները ներառում են հետևյալ չորս բաղադրիչները.

1) զարգացման ոլորտներ.
2) մասնագիտական գործունեության ձևեր.
3) կարողունակության մակարդակներ.
4) մանկավարժի բնութագրեր:

Ըստ զարգացման ոլորտների՝ նշված են մասնագիտական գործունեության ձևերը, այդ թվում՝

1) առարկայական գիտելիքների զարգացում
2) դասընթացների և դասերի պլանավորում՝ հաշվի առնելով սովորողների կարիքները
3) դասի վարում
4) տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ինտեգրում
5) 21-րդ դարի հմտությունների (քննադատական մտածողություն ստեղծարարություն համագործակցություն հաղորդակցում տեղեկատվական գրագիտություն մեդիագրագիտություն տեխնոլոգիական գրագիտություն ճկունություն առաջնորդում նախաձեռնողականություն արդյունավետություն սոցիալական հմտություններ
6) Խթանում
7) ռեսուրսների կառավարում.
8) սովորողների կարիքների ճանաչում կամ բացահայտում.
9) ուսումնառության գնահատում.
10) ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ

ՆՊԱՏԱԿ

- Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում.
- կրթության բովանդակության նոր մոտեցումների և հանրակրթության նոր չափորոշչի պահանջներին համահունչ գործունեություն իրականացնող պատրաստակամ թիմի ձևավորում:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում,
- Ուսուցիչների մեթոդամանկավարժական կատարելագործման և դասավանդման հմտությունների բարելավում
- Ուսուցիչների գնահատման հմտությունների բարելավում
- ՏՀՏ միջոցների կիրառման հմտությունների բարելավում դասավանդման ընթացքում
- Ուսուցչի գործունեության գնահատման խրախուսման մեխանիզմների և ձևերի բարելավում
- Ուսուցչի դերի և հեղինակության բարձրացում, փոխվստահության միջավայրի ձևավորում:

ՌԻՍԿԵՐ

- Մանկավարժական համակազմի մոտիվացիայի նվազում
- Մասնագիտական վարկանիշի նսեմացման գործողություններ
- Մանկավարժական համակազմի մոտիվացիայի նվազում
- Ֆինանսական անբավարար միջոցներ
- Իրավունքների ոտնահարում
- Մանկավարժական բուհեր ընդունվողների կտրուկ նվազում

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կազմակերպել ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
- Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորման և ուսուցչի տարակարգին դիմելու գործընթացներին:
- Թղթավարությամբ պայմանավորված գերծանրաբեռնվածության բեռնաթափում ինքնակրթության մոտիվացիան բարձրացնելու համար
- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում

| **Գործողություններ** | **Պատասխանատուներ** | **Արդյունքների գնահատման չափանիշ** | **Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ** | **Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ** | **Ժամանակացույց** | **Ֆինանսական աղբյուրներ** |
|---|---|---|---|---|---|---|
| Կազմակերպել | Տնօրենի տեղակալ | Նոր մոտեցումներին և | Ուսումնական | Տնօրեն Տնօրենի | 2024- | Մարդկային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| շարունակական վերապատրաստումներ, զրույցներ, սեմինարներ դպրոցի ներսում | Մ/մ նախագահներ | տեխնոլոգիաներին լիարժեք տիրապետող ուսուցիչների առկայություն | նյութեր, պաստառներ, ՏՀՏ գործիքներ | տեղակալ Մ/մ նախագահներ ՄԿԱ գծով համակարգող ՈւԴԱՊ հաշվետվություն տնօրենի տեղակալի հաշվետվություն | 2029 | ռեսուրս Պետբյուջե |
| Հանրակրթության պետական և առարկայական նոր չափորոշիչների ներդրմամբ պայմանավորված վերապատրաստումների կազմակերպում: | Վերապատրաստող կազմակերպություններ,ԿԶՆԱԿ,Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ, | ՀՊՉ նոր չա-փորոշիչների ներդրմամբ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպում | ԿԶՆԱԿ-ի կողմից իրակա-նացվող վերապատրաստումներ, դպրոցի մեթոդմիավորումներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիարակչական աշխատանքների,մեթոդ-միավորումների նա-խագահների հաշվետ-վություններ,դասալսումների արդյունքներ | 2024-2029 | Մարդկային ռեսուրս |
| Ուսուցիչներին ներգրավել տարբեր հարթակներում ՏՀՏ գործիքներին տիրապետելու նպատակով կազմակերպված առկա և հեռավար վերապատրաստման դասընթացներին | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորման նախագահներ | ՏՀՏ միջոցների արդյունավետ կիրառում դասի ընթացքում: Ապահովել ուսուցիչների մասնակցությունը գործընկեր դպրոցների կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին | ԿԶՆԱԿ հիմ-նադրամի և այլ հարթակներում առաջարկվող առկա և հեռավար դասընթացներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների նա-խագահների հաշվետ-վություններ,դասալսումների արդյունքներ | 2024-2029 | Պետբյուջե Մարդկային ռեսուրս |
| Կազմակերպել ուսուցիչների մեծարման միջոցա- | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, | Ուսուցիչների մոտիվացիայի աճ | Համապատասխան նյութեր, ՏՀՏ միջոցներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա- | 2024-2029 | Մարդկային ռեսուրս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ռումներ՝ կիրառելով խրախուսանքի տարբեր միջոցներ: | տնօրենի տեղակալ-ներ,մեթոդմիա-վորումների նախագահներ | | | տանքների,մեթոդ-միավորումների նա-խագահների հաշվետ-վություններ,դասալսու մների արդյունքներ | | |
| Համընդհանուր ներառման իրականացման ունակությունների կարողությունների զարգացում | Տնօրեն, Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ Ուսուցչի օգնական Ուսուցիչներ | Կրթության իրացում ԱՌԻՊ-ին և ՄԱԾԱՊ-ին համապատասխան | Ուսումնական նյութեր,պաստառնե ր, ՏՀՏ գործիքներ | Կառավարման խորհուրդ Տնօրեն Տնօրենի տեղակալ Ներքին գնահատման հաշվետվություն ՈւԴԱՊ հաշվետվություն | 2024-2029 | Մարդկային ռեսուրս |
| Ներդպրոցական վերահսկողության իրականացում<br>• Դասալսումներ, քննարկումներ<br>• Ամփոփիչ և ընթա- ցիկ ստուգողական աշխատանքներ<br>• Փորձի փոխանակ- ման դասեր և այլն<br>• Չնավորող գնա-հատման չափանիշների և | Տնօրեն, Տնօրենի տեղակալ Մ/մ նախագահներ Ուսուցչի օգնական Ուսուցիչներ | Կրթության որակի բարելավում | Դասալսումների արդյունքների գնահատման սյունակաշարեր | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների նա-խագահների հաշվետ-վություններ, դասա-լսումների արդյունքներ | 2024-2029 | Մարդկային ռեսուրս |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| սանդղակների մշակում և այլն | | | | | | |
| Մշակել ուսուցիչների գործունեության գնահատման չափանիշներ ու բնութագրիչներ: | Տնօրեն,տնօրենի տեղակալներ,մեթոդ միավորումների նախագահներ | Ուսուցիչների մոտիվացիայի բարձրացում կրթության որակի բարելավում | Համացանց, կիառվող տարբեր չափանիշների վերաբերյալ նյութեր | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների, մեթոդ-միավորումների նա-խագահների հաշվետ-վություններ, դասա-լսումների արդյունքներ | 2024-2029 | Մարդկային ռեսուրս |
| Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող տարբեր ծրագրերին, ավելացնել վերապատրաստող (մենթոր) և տարակարգ ունեցող ուսուցիչներ թիվը: | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, մեթոդմիավորումների նախագահներ, գործընկեր դպրոցներ | Կրթության որակի բարելավում | Վերապատրաստման առկա և հեռավար դասընթացներ, հետազոտական աշխատանքները գնահատելու սանդղակներ | Մշտադիտարկում, ուսումնադաստիա-րակչական աշխա-տանքների,մեթոդմիավորումների նա- խագահների հաշվետ-վություններ,դասալսումների արդյունքներ | 2024-2029 | Մարդկային ռեսուրս |

## 1.7 ՏՀՏ ,ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքակրթության զարգացմանը համընթաց ՏՀՏ կիրառման գործընթացը անհրաժեշտ է իրականացնել շարունակական վերապատրաստումների, ինչպես նաև ՏՀՏ գործիքների արդիականացման և հնարավորությունների զարգացման միջոցով:

Դպրոցում յուրաքանչյուր առարկայից առնվազն ամիսը մեկ անգամ համակարգչային դաս է կազմակերպվում,որի արդյունքում զարգանում է ՏՀՏ գիտելիքները, ինքնուրույն աշխատելու կարողությունները, սահիկաշար ներկայացնելը:

ՏՀՏ գիտելիքների ձևավորման համար «Ինֆորմատիկա» և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկաների կարևորումը առանձնահատուկ նշանակություն ունի:Շարունակական իրազեկման դասեր են կազմակերպվում աշակերտների շրջանում մեդիագրագիտության թեմայով՝ աշակերտներին իրական և կեղծ կայքերի և աղբյուրների տարբերակումը սովորեցնելու,վտանգավոր կայքերի օգտագործումից զերծ պահելու նպատակով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման, ժամանակակից կրթության կազմակերպման,գրագետ փաստաթղթաշրջանառության, փոփոխվող նորմատիվ իրավական ակտերի ծանոթացման, իրազեկման,էլեկտրոնային մատենավարության, դասագրքերի հայտագրման կազմակերպման և կրթական նորարարություններին ծանոթանալու համար դպրոցն օգտվում է տարբեր կրթական կայքերի հնարավորություններից:

Դրանք են՝

- https://kznak.am/
- https://kznakhimnadram.blogspot.com/
- https://lib.armedu.am/
- https://www.imdproc.am/
- https://esource.armedu.am/
- https://dshh.am/
- https://emis.am/
- https://matyan.emis.am/#/login
- https://www.arlis.am/
- https://www.e-draft.am/

ԿՏԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ, որոնց մասնակցում են դպրոցի ուսուցիչները և օպերատորը, կազմակերպվում է քննարկում կայքի գործարկման խնդիրների շուրջ: Քննարկումներին պարբերաբար մասնակցում է նաև տնօրենությունը՝ վեր հանելով խնդիրները և առաջարկությունները: Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերը նպաստում են ուսուցիչների՝ ՏՀՏ գործիքների օգտագործման հմտությունների բարելավմանը, հեռավար ուսուցում կազմակերպելու հմտությունների զարգացմանը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| ՏՀՏ,կրթական այլ տեխնոլոգիաներ, նորարարություններ | |
| • ՏՀՏ գործիքների լայն կիրառում, յուրաքանչյուր առակայից առնվազն մեկ անգամ<br>• Համակարգչային կաբինետի առկայություն<br>• ՏՀՏ գործիքների կիրառման իմացություն<br>• Համակարգչային ծրագրերի իմացություն<br>• Հեռավար դասերի կազմակերպման հմտություն<br>• ԴԿՏՀ, ԿՏԱԿ , emis համակարգերի պատշաճ վարում<br>• Առարկայական առցանց հարթակի առկայություն<br>• Դպրոցի կայքի և ֆեյսբուքյան էջի պատշաճ վարում<br>• Դպրոցի էլեկտրոնային փաստաթղթա-շրջանառության առկայություն<br>• Ուսուցիչների կողմից փոխներգործուն, համագործակցային նախագծային ուսուցման մեթոդների կիրառություն<br>• MS Teams միասնական կրթական հարթակի գործիքներից օգտվելու հմտությունների տիրապետում<br>• Առարկայական ծրագրերի դասավանդման էլեկտրոնային ռեսուրսների առկայություն<br>• Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայություն<br>• Հեռավար ուսուցման կազմակերպման ծրագրերի իմացություն և օգտագործում մանկավարժական համակազմի կողմից | • Համակարգիչների պակաս<br>• Էլեկտրոնային գրատախտակների բացակայություն<br>• Բազմաֆունկցիոնալ տպիչների սակավություն<br>• Էլեկտրոնային հրաձգարանի անհրաժեշտություն<br>• Սմարթ գրատախտակի բացակայություն<br>• Ժամանակակից ՏՀՏ գործիքների բացակայություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ՆՊԱՏԱԿ**<br>Էլեկտրոնային ուսումնական նյութերի, պաշարների ստեղծմամբ, ՏՀՏ-ների քանակի ավելացմամբ տեղեկատվական և հեռահաղորդակցական կրթական ծրագրերի ապահովում | | | | | | |
| **ԽՆԴԻՐՆԵՐ**<br>• Ուսուցման և ուսումնառության տեխնոլոգիաների արդի ձևերի կիրառման հմտությունների բարելավում<br>• Ուսուցիչների տարբեր կրթական հարթակի գործիքների օգտվելու հմտությունների բարելավում | | | | | | |
| **ՌԻՍԿԵՐ**<br>• ֆինանսական ոչ բավարար միջոցներ<br>• Որոշ սովորողների և ուսուցիչների անտարբերություն | | | | | | |
| **ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>• Ֆինանսական լրացուցիչ միջոցների հայթայթում ՏՀՏ նոր գործիքներ ձեռք բերելու համար<br>• Խրախուսման տարբեր ձևերի կիրառում | | | | | | |
| **Գործողություններ** | **Պատասխանատուներ** | **Արդյունքների գնահատման չափանիշ** | **Անհրաժեշտ միջոցներ և պարագաներ** | **Վերահսկողության մեխանիզմներ, ստուգման աղբյուրներ** | **Ժամանակացույց** | **Ֆինանսական աղբյուրներ** |
| Սմարթ գրատախտակի ձեռքբերում | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | Նորարարական տեխնոլոգիայով Ուսումնական միջավայրի արդիականացում | Սմարթ գրատախտակ | Լիազոր մարմին Կառավարման խորհուրդ Ներքին գնահատման հաշվետվություն Զարգացման ծրագրի կատարողական | 2027-2028 | Պետբյուջե Լրացուցիչ միջոցներ |
| Դպրոցի վարչատնտե-սական համակարգողին ներկայացնել դասասենյակներն ու կաբինետները նոր սերնդի համակարգիչներով վերազինելու առաջարկ | Տնօրեն, վարչատնտեսական աշխատանքների համակարգող էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման | Ուսումնական միջավայրի արդիականացում | Դյուրակիր համակարգիչներ էլեկտրոնային գրատախտակներ և այլ միջոցներ | Մշտադիտարկում | 2024-2029 | Պետբյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մասնագետ | | | | | |
| Հեռավար դասերի կազմակերպման և մեդիագրագիտության սեմինար | Տնօրենի տեղակալ ինֆորմատիկայի ուսուցիչ | Մեդիագրագետ, իրազեկ ուսուցիչներ | ՏՀՏ գործիքներ, ինտերնետ կապ | Տնօրեն Ներքին գնահատման հաշվետվություն | 2024-2029 Պարբեր աբար | Պետբյուջե Մարդկային ռեսուրսներ |
| Կապի և հաղորդակցական միջոցների բարելավում | ԿՏԱԿ | Որակյալ ինտերնետային ծածկույթ | Որակյալ ինտերնետային ծածկույթ | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2024-2025 թթ. | Պետբյուջե |
| Խրախուսել ուսուցիչներին՝ մասնակցելու կրթական տարբեր հարթակներում իրականացվող էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման հմտությունների բարելավմանն ուղղված դասընթացներին | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորումների նախագահներ | Ուսուցիչների և սովորողների կարողունակություններ ների բարելավում | Հեռավար և առկա ուսուցման հարթակներ | Մշտադիտարկում | 2024-2026 թթ. | Պետբյուջե |
| Սովորողների մեդիագրագիտության կարողունակությունների զարգացման նպատակով կազմա կերպել սեմինարներ քննարկումներ | Տնօրեն տնօրենի տեղակալներ մ/մնախագահներ էլեկտրոնայինկառավ արման մասնագետ | Կրթության որակի բարելավում | Համակարգիչ, (պրոյեկտոր), էլեկտրոնային գրատախտակ և այլ նյութեր | Մշտադիտարկում | 2024-2029 թթ. | Պետբյուջե |

## *1.8 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն*

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում նշվում են հետևյալ հիմնական կետերը.

1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում
2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում,
3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դաս
4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում ավանդման մեթոդներ:

Մինչև 2030թ. կրթության զարգացման պետական ծրագրում, որպես վերջնական նպատակ՝ սահմանված է.

«Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված, արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը»:

Նպատակների իրականացման համար ամրագրված ռազմավարական ուղղություններից են՝

1) համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում, որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները ՀՀ ողջ տարածքում.
2) կրթության արդյունավետության բարձրացում, ինչը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում
3) կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում, որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ամբողջական և բովանդակային ինտեգրման, ինչպես նաև հայկական կրթական ծառայությունների և արտադրանքի արտահանման վրա՝ շահեկանորեն փոխակերպելով Հայաստանի դերը գլոբալ կրթական համակարգում:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| **Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն** | |
| • Հանրակրթական չափորոշիչների փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, թե ուսուցիչների մեծամասնությունը և թե տնօրենությունը ծանոթացել են նոր իրավակարգավորումներին,մասնակցել են վերապատրաստումների, նաև ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացված,քննարկել չափորոշչային նոր պահանջների առանձնահատկությունները:<br>• Առարկայական թեմատիկ պլանները կազմված են նոր չափորոշչային պահանջներին համապատասխան:<br>• Ուսուցիչների ընտությունը նոր չափորոշչային պահանջներով առաջնորդվող դասարններում ճիշտ է իրականացված, քանի որ վերջիններս պատրաստ են սովորել, կատարելագործել իրենց մասնագիտական կարողությունները և լավագույնս ապահովել իրենց առջև դրված նպատակների ու խնդիրների իրագործումը:<br>• Հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչների պահանջները իրականացնող թիմի առկայություն<br>• Սեփական նախաձեռնություններով հանդես եկող մանկավարժական և աշակերտական համակազմ<br>• Վերապատրաստված ուսուցիչների համակազմի առկայություն<br>• Սովորողների անհատական կարիքների հաշվառմամբ ուսուցման կազմակերպում<br>• Կրթության որակի մշտադիտարկման վերահսկողության գնահատման մեխանիզմների կիրառում<br>• Ներդպրոցական վերահսկողության պլանի առկայություն<br>• Դասավանդման մշտադիտարկման և վերահսկողության ձևերի կիրառում<br>• Հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ և այլընտրանքային գնահատման ձևերի կիրառում՝առարկայական չափորոշիչ-ներին համապատասխան կրթության որակը գնահատելու համար<br>• Կրթության որակի ցուցանիշների արդյունքների ամփոփման հիմքի վրա վերլուծությունների առկայություն | • Նոր չափորոշիչների ներդրման ընթացքում չնախատեսված դժվարությունների ի հայտ գալը, նոր պահանջներին ուսուցիչների աշխատելաոճի անհամապատաս-խանությունը<br>• Դասագրքերի բացակայությունը, կամ միայն էլեկտրոնային տարբերակներով հասանելիությունը:<br>• Նյութական/ֆինանսական/ և մարդկային ռեսուրսների անբավարարությունը լիարժեք ապահովելու 2,5,7-րդ դասարաններում անհրաժեշտ ուսումնական նյութերով:<br>• Ռումնական նյութերի բացակայությունը, ինչպես նաև դասագրքերի բացակայությունը էլեկտրոնային տարբերակով<br>• Օժտված և շնորհալի սովորողների համար նոր ծրագրերի ներդրման կարիք<br>• Սովորողների ստեղծագործական կարողությունները ներկայացնող դպրոցական կայքի ոչ ամբողջական պատկերը<br>• Սովորողների քննադատական-վերլուծական մտածողության հետազոտական և նախագծային աշխատանք կատարելու հմտությունների զարգացման կարիք<br>• Նոր չափորոշչով սահմանված՝ սովորողների կարողունակությունների զարգացման անհրաժեշտություն<br>• Գրադարանի և տարբեր էլեկտրոնային ռեսուրսներից օգտվող սովորողների ցածր տոկոս<br>• Որոշ ուսումնական տարիներին «գերազանց» առաջադիմությամբ սովորողների թվի նվազում, որը պայմանավորված էր համավարակի հետևանքով հեռավար կրթության ձևին անցնելու հանգամանքով և 44-օրյա պատերազմի ընթացքում սոցիալ-հոգեբանական գործոններով:<br>• Գրադարանից օգտվելու ցանկություն ունեցող սովորողների մոտիվացիայի պակաս:<br>• Կախվածություն բջջային հեռախոսներից և |

| | |
|---|---|
